ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՌՆՈԼԴ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ակադեմիկոս Առնոլդ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ղ. Փարպեցու փողոց հ. 9 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՌՆՈԼԴ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ակադեմիկոս, ՌԴ կառավարության մրցանակակիր, պրոֆեսոր Առնոլդ Ադամյանը ծնվել է 1935թ. սեպտեմբերի 6-ին Երևանում:

1943թ. ընդունվել է Երևանի կոնսերվատորիային կից օժտված երեխաների դասարան: 1944թ. ընդունվել է Չկալովի անվան № 30 միջնակարգ դպրոց:

1954թ. Առնոլդ Ադամյանը ընդունվել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետ:

1960թ. համալսարանն ավարտելուց հետո նա դարձել է Նոյեմբերյանի շրջանի շրջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչը:

1961-1962թթ. նա եղել է Կալինինա (ներկայումս՝ Տվեր) քաղաքի տարածաշրջանային ուռուցքաբանական դիսպանսերի վիրաբուժական բաժնի ինտերն բժիշկ:

1962-1963թթ. եղել է ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի Ա.Վ. Վիշնովսկու անվան Վիրաբուժության ինստիտուտի կլինիկական օրդինատոր, իսկ 1963-1966թթ. նույն ինստիտուտի ասպիրանտ:

1966-1970թթ. եղել է Ա.Վ.Վիշնովսկու անվան Վիրաբուժության ինստիտուտի կրծքային վիրաբուժության բաժանմունքի կրտսեր գիտաշխատող, իսկ 1970-1983թթ.՝ ավագ գիտաշխատող:

1983-1988թթ. ղեկավարել է վիրաբուժության ինստիտուտի վիրակապման, կարի և պոլիմերային նյութերի լաբորատորիան:

1988-2012թթ. նա զբաղեցրել է վիրակապման, կարի և պոլիմերային նյութերի բաժնի ղեկավարի պաշտոնը:

1971թ. Առնոլդ Ադամյանին շնորհվել է բժշկական գիտությունների դոկտորի, իսկ 1989թ.՝ պրոֆեսորի կոչում:

1997թ. նա ընտրվել է ՌԲԳԱ թղթակից անդամ, իսկ 2005թ.՝ դարձել մասնակից անդամ:

Առնոլդ Ադամյանի ղեկավարությամբ ստեղծվել է բազմաֆունկցիոնալ կենսաբանորեն ակտիվ վիրակապերի տեսականին, որը Ժնևի և Բրյուսելի միջազգային ցուցահանդեսներում արժանացել է ոսկե շքանշանի:

Նրա գիտական գործունեության արդյունքները ներկայացված են ռուսական և արտասահմանյան պարբերականների 693 հրապարակումներում: Առնոլդ Ադամյանը 94 գյուտերի հեղինակ է: Տարիներ շարունակ նա եղել է Մոսկվայի վիրաբույժների ասոցիացիայի նախագահը: Արժանացել է մի շարք պետական մրցանակների: Նա արժանացել է ՌԴ վաստակավոր գյուտարարի կոչմանը:

Առնոլդ Ադամյանը մահացել է 2012 թվականի սեպտեմբերի 11-ին:

Ակադեմիկոս Առնոլդ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ղ. Փարպեցու փողոց հ.9 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Ռուսաստանի հայերի միության և միջազգային հայկական կոնգրեսի նախագահ Ա. Աբրահամյանի և ՌԴ քաղաքացի Ա. Օսիպովայի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՌՆՈԼԴ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առնոլդ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՌՆՈԼԴ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առնոլդ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ